**Արձանագրություն N 3**
**«Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի կարիքների համար «ԻՀԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-2026/34» ծածկագրով էլեկտրոնային աճուրդի ընթացակարգի գնահատող հանձնաժողովի հայտերի գնահատման նիստի**

ք. Երևան «02» փետրվարի 2026թ.
ժամը 11:00

Մասնակցում էին՝
Հանձնաժողովի նախագահ Էդգար Ծառուկյան

Գնահատող անդամներ Անժելա Չիլինգարյան
Լուսինե Բաղդասարյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Փառանձեմ Խաչատրյանը

**Օրակարգ**

1. **«ԻՀԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-2026/34» ծածկագրով գնման ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին:**
2. **Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գին:**
3. **Հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված և հաջորդաբար տեղեր զբաղեցրած մասնակիցների որոշման մասին:**
4. **Հանձնաժողովի հաջորդ նիստի վայրը, օրը և ժամը սահմանելու մասին:**

**1. «ԻՀԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-2026/34» ծածկագրով ընթացակարգի էլեկտրոնային հայտերը կազմելու և ներկայացնելու՝ ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխանության մասին, տվյալներ բացված յուրաքանչյուր հայտում պահանջվող փաստաթղթերի առկայության մասին, տվյալներ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին համապատասխան կազմված լինելու մասին:**

**(Փ. Խաչատրյան)**

1.1 Մասնակիցների էլեկտրոնային հայտերը էլեկտրոնային գնումների **(e-auctiom)** համակարգի կողմից համարվել են հետագա գնահատման համար ընդունելի.

1.2 Մասնակիցների էլեկտրոնային հայտերում հրավերով պահանջվող /նախատեսված/ փաստաթղթերն առկա են և համապատասխանում են **«ԻՀԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-2026/34»** ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին, բացառությամբ ներքոհիշյալ դեպքերի.

- «ԲԵՍԹ ԹՐԵՅԴԻՆԳ 20» ՍՊ ընկերության կողմից ներկայացված հայտում հավելված 1.1 կետով սահմանված առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում անհրաժեշտություն է առաջացել շտկել 1, 3 և 7 չափաբաժիններով առաջարկվող ապրանքի ֆիրմային անվանումը,ապրաքային նշանը և տեխնիկական բնութագիրը, ինչպես նաև հավելված 1-ով սահմանված դիմում հայտարարությունը:

Հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 41-րդ կետը՝ հանձնաժողովը որոշեց «ԲԵՍԹ ԹՐԵՅԴԻՆԳ 20» ՍՊ ընկերությանը ուղարկել արձանագրված շտկման ծանուցումը /29.01.2026թ./:

Ծանուցումը ստանալու օրվանից հաշված մեկ աշխատանքային օրվա ընթացքում «ԲԵՍԹ ԹՐԵՅԴԻՆԳ 20» ՍՊ ընկերության կողմից շտկված տարբերակը ուղարկվել է էլեկտրոնային գնումների (e-auctiom) համակարգի միջոցով:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0*

## 2. Յուրաքանչյուր մասնակցի առաջարկած գին

**(Փ. Խաչատրյան)**

2.1 «Գնումների մասին» ՀՀ օրենսդրության և սույն ընթացակարգի հրավերի պահանջներին համապատասխան գնային առաջարկ են ներկայացրել հետևյալ մասնակիցները. **Կից՝ Հավելված N 1:**

## 3. Հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված հայտ ներկայացրած մասնակիցներից ընտրված մասնակցի որոշման մասին.

**(Փ. Խաչատրյան)**

3.1 02.02.2026թ.-ին հայտերի գնահատման նիստի ավարտի օրը, e-Auction էլեկտրոնային համակարգի գնահատման արդյունքում գնահատող հանձնաժողովը որոշեց ներկայացված գնային առաջարկների հիման վրա՝ **«ԻՀԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-2026/34»** ծածկագրով ընթացակարգի հրավերի պահանջներին բավարարար (համապատասխան) գնահատված, հայտ ներկայացրած՝

- «ԲԵՍԹ ԹՐԵՅԴԻՆԳ 20» ՍՊ ընկերությանը ճանաչել 1, 3, 7 չափաբաժինների մասով ընտրված մասնակից
- Կառլեն Մանուկյան ԱՁ-ին ճանաչել 2 չափաբաժնի մասով ընտրված մասնակից
- «ՔՕԹԹՕԹ» ՍՊ ընկերությանը ճանաչել 4, 9 չափաբաժինների մասով ընտրված մասնակից
- «ԻՆՏ. ՄԵՆՏԱՍ ԳՐՈՒՓ» ՍՊ ընկերությանը ճանաչել 6, 8 չափաբաժինների մասով ընտրված մասնակից
- «Աշան-Արմ» ՍՊ ընկերությանը ճանաչել 5 չափաբաժնի մասով ընտրված մասնակից

3.2 Գնահատող հանձնաժողովը որոշեց հաստատել՝ **«ԻՀԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-2026/34»** ծածկագրով ընթացակարգի արդյունքում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարության տեքստը:

3.3 Հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասը՝ անգործության ժամկետ սահմանել 10 օրացուցային օր:

3.4 Պայմանագիր կնքելու նպատակով ընտրված մասնակցին ծանուցել պայմանագրի նախագիծը և առաջարկել **5 աշխատանքային օրվա ընթացքում պայմանագրի հաստատված տարբերակը կցել համակարգ, և կից գրությամբ թղթային տարբերակով ներկայացնել որակավորման ապահովումը (տուժանքի մասին համաձայնագիր և կից վճարման պահանջագիր), պայմանագրի կատարման ապահովումը (տուժանքի մասին համաձայնագիր և կից վճարման պահանջագիր):**

*Ընդունվել է որոշում՝ կողմ -3, դեմ – 0*

## 4. Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

**(Փ. Խաչատրյան)**

4.1 **«ԻՀԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-2026/34»** ծածկագրով ընթացակարգի հանձնաժողովի հաջորդ նիստը անցկացնել ոչ ուշ, քան գնման պայմանագիր չկնքվելու դեպքում այդ հանգամանքը հայտնի դառնալու օրվան հաջորդող աշխատանքային օրը, ժամը 11:00-ն, «Ինֆեկցիոն հիվանդությունների ազգային կենտրոն» ՓԲԸ-ի շենքում, ք. Երևան, Աճառյան 2, 212 սենյակում:

*Ընդունվել է որոշում՝ կողմ - 3, դեմ – 0*

Հանձնաժողովի

Նախագահ՝ _____ Է. Ծառուկյան

Անդամներ՝ _____ Ա. Չիլինգարյան

_____ Լ. Բաղդասարյան

Քարտուղար՝ _____ Փ. Խաչատրյան